«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 3
27.10.2022թ.

1. ՀԱԱՀ ստորաբաժանումների 2021-2022 ուստարվա տարեկան հաշվետվությունների վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1.1. Հաստատել համալսարանի ստորաբաժանումների 2021-2022 ուստարվա տարեկան հաշվետվությունները:

1.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին սերտացնել համագործակցությունն այլ ստորաբաժանումների հետ, համալսարանում ստեղծված ենթակառուցվածքների հնարավորությունները լայնորեն օգտագործել ուսումնական, գիտահետազոտական, փորձարարական և խորհրդատվական նպատակներով:

1.3. Հանձնարարել ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Է. Ղազարյանին՝ ներկայացնել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը ռեկտոր Վ. ՈՒռուտյանին:

1.4. Հանձնարարել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանին ձևավորել ուսանողների թիմ՝ գյուղատնտեսական աշխատանքներ կատարող ռոբոտների ստեղծման մրցույթին ներկայանալու համար:

1.5. Հանձնարարել ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ Ա. Գրիգորյանին՝ ICARE հիմնադրամի կողմից իրականացված կարճաժամկետ ծրագրերի արդյունքում ձեռք բերված փորձը, նյութերը՝ երկրատեղեկատվական համակարգերի, հեռավար զոնդավորման և դրոնների կառավարման առումով, փոխանցել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի մասնագետներին:

1.6. Հանձնարարել աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ս. Ավետիսյանին՝ հնարավոր բոլոր միջոցներով տարածել ագրոբիզնեսի դեպարտամենտում կազմակերպվող անգլերեն լեզվի անվճար դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը:

2. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակում ՀԱԱՀ անվանական կրթաթոշակառուների հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը (ձայների «Կողմ»՝ 49, «Դեմ»՝ 0, «Ձեռնպահ»՝ 1 հարաբերակցությամբ) որոշեց.

2.1. Հաստատել ֆակուլտետների կողմից առաջադրված թեկնածությունները և 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակ տրամադրել հետևյալ ուսանողներին.

Ստորաբաժանումը	*Անուն, ազգանուն*	*Մասնագիտություն, կուրս*	*Կրթաթոշակ*
Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	Ռաիսա Ռոզ Չաքմաքեան	«Անասնաբուժություն» մասն. 4-րդ	Ա. Զ. Թամամշևի անվ. կրթաթոշակ
	Էմին Սահակյան	«Անասնաբուժություն» մասն. 4-րդ	Ա. Ա. Ռուխկյանի անվ. կրթաթոշակ
Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ	Քրիստինե Դավթյան	«Շինարար.» մասն. «Հող., հող. կադ» կրթ. ծրագիր 5	պրոֆ. Ի.Վ. Եղիազարովի անվ. կրթ.
	Գոարիկ Գրիգորյան	«Շինարար.» մասն. «Հողաշ., հող. կադ.» կրթական ծրագիր 4-րդ	քաղաք.ական գործիչ Ա.Ղ. Խանջյանի անվ. կրթ.
	Գագիկ Գրիգորյան	«Կենս. անվտ.» մաս., «Կենս. անվտ.» կրթական ծրագիր 5-րդ	պրոֆեսոր Հ.Վ. Մաքսապետյանի անվ. կրթաթոշակ
	Ժաննա Սարիբեկյան	«Շինարար» մասն. «Հողաշ., հող. կադ.» կրթական ծրագիր 5-րդ	ակադեմիկոս Ա.Ա. Մաթևոսյանի անվ. կրթաթոշակ
	Ռաֆայել Եփրեմյան	«Գյուղ. արտ. մեք., մեք. և սարք.» մաս. «Գյուղ. մեք., մեք. և սարք.» կրթ. ծր. 5-րդ	պրոֆեսոր Ս.Ս. Սահակյանի անվ. կրթաթոշակ
Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ	Աշխեն Ավետիսյան	«Ագրոբիզնես» մասն. «Ագրոբ.» կրթ. ծր. 5-րդ	Անտոն Քոչինյանի անվ. կրթաթոշակ
	Նարինե Բարսեղյան	«Ագրոբիզնես» մասն. «Ագրոբ.» կրթ. ծրագիր 5-րդ	Անդրանիկ Մարգարյանի անվ. կրթ.
	Ժենյա Ղազարյան	«Ագրոբիզնես» մասն. «Ագրոբ.» կրթ. ծրագիր 5-րդ	Բալաբեկ Մարտիրոսյանի անվ. կրթ.
	Արթուր Կարոյան	«Ագրոէկոն.» մասն. «Ագրար. քաղ., խորհ. և տեղ.» կրթ. ծրագիր 5-րդ	Վահան Թոթոմյանցի անվ. կրթաթոշակ
Ագրոնոմիական ֆակուլտետ	Սուսաննա Խաչատրյան	«Ագրոէկոլոգիա» կրթական ծրագիր 4-րդ	Ա.Գ. Թումանյանի անվ. կրթաթոշակ
	Արտյոմ Գասպարյան	«Ջերմատ. ագրոտեխն.» կրթ. ծրագիր 3-րդ	Գ.Խ. Աղաջանյանի անվ. կրթաթոշակ
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	Վալյա Մուրադյան	«Գյուղ. հումք. և պարեն. փորձ., ստ., սերտ.» կրթ. ծրագիր 4-րդ	պրոֆեսոր Ա.Հ.Քալանթարի անվ. կրթաթոշակ
	Օֆելյա Գրիգորյան	«Խմորման արտ. տեխն. և գինեգ.» կրթ. ծրագիր 4-րդ	պրոֆեսոր Զ.Խ. Դիլանյանի անվան կրթաթոշակ
	Աննա Ենոքյան	«Խմորման արտ. տեխն. և գինեգ.» կրթ. ծրագիր 4-րդ	պրոֆեսոր Վ.Ե. Թաիրովի անվան կրթաթոշակ

	Ռայա Խոջոյան	«Խմորման արտ. տեխն. և գինեգ.» կրթ. ծրագիր 3-րդ	կոնյակագործ Մարգար Սեդրակյանի անվ. կրթ.

2.2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին վերանայել «ՀԱԱՀ անվանական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգ»-ը:

3. ՀԱԱՀ Գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ Գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանը:

4. «ՀԱԱՀ մագիստրատուրայի ընդունելության կարգ»-ի 15-րդ կետում փոփոխություններ կատարելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել «ՀԱԱՀ մագիստրատուրայի ընդունելության կարգ»-ի 15-րդ կետում առաջարկվող փոփոխությունները. «1-ին փուլով առկա ուսուցման համակարգում մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ընթացիկ տարվա հունիսի 5-ից մինչև հունիսի 20-ը, որին կարող են առաջին հերթին մասնակցել Համալսարանի տվյալ մասնագիտության բակալավրի կրթական աստիճան ունեցող տվյալ տարվա շրջանավարտները, որոնցից բացի՝ թափուր տեղերի առկայության դեպքում, 1-ին փուլով առկա ուսուցման համակարգում մագիստրատուրայի ընդունելությանը կարող են մասնակցել նաև տվյալ մասնագիտության բակալավրի կրթական աստիճան ունեցող նախորդ տարիների շրջանավարտները, ապա սույն կարգի 20-րդ կետի պահանջներին բավարարող այլ կարգավիճակ ունեցող դիմորդներ»:

5. ՀԱԱՀ-ում 2015-2021 թ.-ին Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի արդյունքների վերաբերյալ.

5.1. Ընդունել ի գիտություն:

5.2. Հանձնարարել ՈՒԳԿՎ բաժնի վարիչ Ա. Աղասարյանին, բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին տեղեկացնել ագրոբիզնեսի դեպարտամենտի կողմից կազմակերպվող անգլերեն լեզվի անվճար դասընթացների մասին:

5.3. Հանձնարարել միջազգային կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանին համալսարանի գործընկեր եվրոպական համալսարաններից ձեռք բերել կրթական տարբեր ծրագրերի ուսումնական պլաններ:

6. Ուսանողների գնահատման համակարգում փոփոխութ¬յուններ կատարելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

6.1. Հաստատել ՀԱԱՀ ուսանողների գիտելիքի գնահատման նոր համակարգը և դրական գնահատականի անցողիկ նվազագույն շեմը սահմանել 50 միավոր:

Գնահատման նոր համակարգը				**Գնահատման գործող համակարգը**			
96-100	A+	20	4.0	95-100	A+	20	4.0
89-95	A	19		87-94	A	19	
84-88	A-	18	3.7	81-86	A-	18	3.7
79-83	B+	17	3.3	75-80	B+	17	3.3
72-78	B	15-16	3.0	67-74	B	15-16	3.0
67-71	B-	14	2.7	61-66	B-	14	2.7
62-66	C+	13	2.3	55-60	C+	13	2.3
55-61	C	11-12	2.0	46-54	C	9-12	2.0
50-54	C-	10	1.7	40-45	C-	8	1.7
< 50	**D**	**Անբա-վարար**	**0**	**< 40**	**D**	**Անբա-վարար**	**0**
0	F (Failure for Non-Attendance)	Չներկա-յացած	0	0	F (Failure for Non-Attendance)	Չներկա-յացած	0
≥ 50	S (satisfac-tory)	Ստուգ-ված	-	≥ 40	S (satisfac-tory)	Ստուգ-ված	-
< 50	U (unsatis-factory)	Չստուգ-ված	-	< 40	U (unsatis-factory)	Չստուգ-ված	-

6.2. Գիտելիքի գնահատման նոր համակարգը կիրառել 2022-2023 ուս. տարում ՀԱԱՀ 1-ին կուրսերում սովորող և դրանից հետո ՀԱԱՀ ընդունվող ուսանողների գնահատման համար (կրթական բոլոր աստիճաններում):

6.3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»-ում կատարել համապատասխան փոփոխություններ:

7. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի կանոնակարգում փոփոխություն կատարելու, մեթոդ. խորհրդի կողմից հավանության արժանացած ուսումնամեթոդական աշխատանքները հրատարակման երաշխավորելու, ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու հարցերի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

7.1. ՀԱԱՀ Գիտական խորհրդի 2021թ մարտի 15-ի նիստում (արձանագրություն թիվ 7) հաստատված «ՀԱԱՀ հիմնադրամի մեթոդական խորհրդի կանոնակարգ»-ի 7-րդ կետում կատարել փոփոխություն և 7-րդ հոդվածը՝ *«ներկայացնում է առաջարկներ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական կամ օժանդակ այլ գրականության մշակման և հրատարակման վերաբերյալ, երաշխավորում է*

վերախմբագրել հետևյալ ձևակերպմամբ. *«ներկայացնում է առաջարկներ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական կամ օժանդակ այլ գրականության մշակման և հրատարակման վերաբերյալ, երաշխավորում է հրատարակման, ներկայացնում է Հիմնադրամի Գիտական խորհրդի հաստատմանը»:*

7.2. ՀԱԱՀ Մեթոդական խորհրդի կողմից ներկայացված աշխատությունները երաշխավորել հրատարակման.

- «Հայոց պատմություն» և «Հասարակագիտական առարկաների մոդուլ» դասընթացների ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակման (հեղինակներ՝ Հ. Սուքիասյան, Մ. Նաջարյան, Ա. Ղարիբյան, Մ. Մովսիսյան, Մ. Ատալյան, Լ. Պողոսյան, Լ. Նուրբեկյան, Վ. Ղամբարյան),

- «Կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիական գործընթացների կազմակերպումը HACCP կոդեքսի համաձայն» մեթոդական ձեռնարկ (հեղինակներ՝ Հ.Գ. Բատիկյան, Ա.Ա. Աղաբաբյան, Ա.Ա. Կարապետյան, Ն.Ն. Ամիրբեկյան, Ա.Մ. Աղաբաբյան):

7.3. Հաստատել 1-ին կուրսերի ուսումնական պլաններում դասավանդվող «Ինֆորմատիկա», «Օտար լեզու» առարկաները 1-ին կիսամյակից 2-րդ կիսամյակ, իսկ «Ռուսաց լեզու» և «Քիմիա» առարկաները՝ 2-րդ կիսամյակից 1-ին կիսամյակ տեղափոխությունը:

8. ՀՀ գիտության կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ»-ին մասնակցության հայտերի երաշխավորման վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

8.1. Երաշխավորել «Նոր ագրոքիմիկատներ բանակի կարիքների համար» թեմայով հայտի ներկայացումը ՀՀ գիտության կոմիտեի մրցույթին (թեմայի ղեկավար՝ ք.գ.թ. Ա. Միքայելյան):

8.2. Երաշխավորել «Հողմաէներգետիկ տեղակայանքի մշակում ՀՀ տարբեր ոլոտներում էներգաապահովման համար» թեմայով հայտի ներկայացումը ՀՀ գիտության կոմիտեի մրցույթին (թեմայի ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Կ. Ամիրյան):

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ